

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

## *ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2022Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ




ԹԻՎ 10

**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում  
2022թ. հունվար-հոկտեմբերին\***

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ) կազմել է 9.5%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.3%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ	2022թ.			
	հոկտեմբերը		հունվար- հոկտեմբերը 2021թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ,%	հոկտեմբերը 2021թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2021թ. հոկտեմբերի նկատմամբ, %	2022թ. սեպտեմբերի նկատմամբ,%		
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	9.5	0.3	8.7	106.0
01 սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	12.5	0.3	13.5	104.9
02 ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.5	0.1	8.1	108.3
03 հագուստ և կոշիկ	8.7	1.5	9.4	104.6
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	7.8	0.1	5.9	106.7
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	10.9	0.3	7.5	110.8
06 առողջապահություն	2.7	0.1	1.5	102.7
07 տրանսպորտ	9.0	-0.1	7.3	107.9
08 կապ	0.6	0.0	0.4	100.5
09 հանգիստ և մշակույթ	14.1	0.4	13.0	109.4
10 կրթություն	4.7	0.0	2.1	104.7
11 ռեստորաններ և հյուրանոցներ	9.3	0.7	6.8	107.8
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	11.9	0.8	7.0	111.3

**Սպառողական գների փոփոխությունները 2022թ. հոկտեմբերին 2015թ. նկատմամբ \*\***



\* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2022թ. հոկտեմբերի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսի ընդարձակ տեղեկատվությունը գտնելվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):


\*\* Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հղման ժամանակաշրջան:

2022թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.6% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.4% հավելաճ):

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.1-0.3%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է մայրաքաղաքում:

Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2022թ. հոկտեմբերին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2022թ. հոկտեմբերին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի


	2022թ.			
	հոկտեմբերը		հունվար-հոկտեմբերը	հոկտեմբերը
	2021թ. հոկտեմբերի նկատմամբ, %	2022թ. սեպտեմբերի նկատմամբ, %	2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %	2021թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Սպառման ապրանքներ	10.6	0.4	10.8	105.7
<i>այդ թվում՝</i>				
սննդամթերք, խմիչք և ծխախոտ	12.0	0.3	12.9	105.2
ոչ պարենային ապրանքներ	8.0	0.4	6.9	106.6
Ծառայություններ	7.3	0.1	4.8	106.5

Սպառողական գների հավելվածը 2013-2022թթ. հոկտեմբերին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Սպառողական գների ինդեքսի տոկոսային փոփոխությունները նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ 2018-2022թթ.



**Սննդամթերքի գներ:** 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 12.5%, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.3% գնաճ: Հանրապետության դիտարկվող 8 քաղաքներում 2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.1-0.5%-ով, իսկ 3-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.5%-ով:

Պարենային հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. հոկտեմբերին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերի սեպտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերի սեպտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	18.6	0.3	1.474	0.025
Միս	12.3	0.0	1.140	0.000

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Ձուկ և ծովամթերք	2.0	0.0	0.013	0.000
Կաթնամթերք, պանիր և ձու	10.4	1.1	0.526	0.056
Յուղեր և ճարպեր	6.6	-1.0	0.177	-0.027
Սրգեր	13.9	-3.6	0.442	-0.118
Բանջարեղեն	3.6	4.5	0.475	0.151
Շաքար, մրգախյուս, մեղր, օշարակներ, շոկոլադ և շաքարային հրուշակեղեն	8.4	1.5	0.161	0.027
Սննդամթերք, չներառված ուրիշ խմբավորումներում	4.7	0.4	0.015	0.001
Սուրճ, թեյ և կակաո	11.6	0.8	0.185	0.013
Հանքային կամ աղբյուրի ջուր, շաքարավազ խմելու ջուր	10.0	0.5	0.039	0.002
Օղի	11.7	0.3	0.191	0.006
Գինի	0.6	-0.2	0.003	-0.001
Գարեջուր	8.3	0.1	0.019	0.000
Ծխախոտային արտադրատեսակներ	8.6	0.1	0.124	0.001

2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ բրնձի գինն աճել է 10.0%-ով, այլուրի՛նը՝ 13.3%-ով, ձավարեղենի՛նը՝ 21.0%-ով, մակարոնեղենի՛նը՝ 30.3%-ով, հնդկացորենի՛նը՝ 23.2%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 0.4%, 0.7%, 1.1%, 0.3% և 1.6% գնանկում:

2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ հացի գինն աճել է 18.8%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.3%-ով:

Կարագի, շոկոլադի, մեղրի և հրուշակեղենի գները 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում աճել են՝ համապատասխանաբար 3.3%, 9.1%, 9.3% և 11.1%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.2%, 1.2%, 0.6%, 2.5%-ով:

2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում թարմ կաթի գինն աճել է 13.5%-ով, պանրինը՝ 22.1%-ով, տավարի մսինը՝ 23.5%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.9%, 1.1% և 0.9%-ով:

Միաժամանակ, 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է խոզի, գառան մսերի և թռչնամսի՝ 1.3%, 5.2% և 3.5% գնաճ, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 1.9%, 1.3% և 1.3% գնանկում:

Չվի գինը 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 20.5%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 2.9% գնաճ:


Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 2.9%, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 2.6% գնաճ:

2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ արևածաղկի բուսական յուղի գինը նվազել է 0.2%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 3.3%-ով:

Ցիտրուսային մրգերի գները 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ նվազել են 2.9%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 14.6%-ով:


Բանջարեղենի ապրանքախմբում 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 3.6%, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 4.5% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2020-2022թթ. հունվար-հոկտեմբերին<sup>1</sup>  
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցվել է 13.9% գնաճ, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 3.6% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2020-2022թթ. հունվար-հոկտեմբերին<sup>1</sup>  
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 8.0%, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.4% գնաճ:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. հոկտեմբերին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հազուստ	9.4	1.2	0.176	0.015
Կոշիկ տարբեր տեսակի	7.6	2.1	0.084	0.016

<sup>1</sup> 2022թ. սեպտեմբեր-հոկտեմբերին 2021թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:


	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Նյութեր բնակարանի նորոգման և սպասարկման համար	9.7	0.3	0.039	0.001
Կահույք և կահավորանք	8.3	0.3	0.041	0.001
Խոշոր կենցաղային սարքեր, էլեկտրական և ոչ էլեկտրական	8.4	0.5	0.045	0.003
Կենցաղային փոքր էլեկտրական սարքեր	8.5	0.2	0.006	0.000
Ապակե ամանեղեն, ճաշասպասք և տնային կահ-կարասի	7.9	0.2	0.025	0.001
Խոշոր գործիքներ և հարմարանքներ	2.3	-0.3	0.001	0.000
Ձեռքի գործիքներ և տարբեր հարմարանքներ	6.4	0.2	0.007	0.000
Կարճատև օգտագործման կենցաղային ապրանքներ	13.7	0.3	0.343	0.009
Դեղագործական ապրանքներ	0.4	0.1	0.012	0.001
Բժշկական նշանակության այլ արտադրանք	6.9	0.6	0.022	0.002
Բժշկական սարքավորումներ և սարքեր	4.0	0.5	0.023	0.003
Վառելանյութեր և քսանյութեր անձնական փոխադրամիջոցների համար	6.5	-0.1	0.449	-0.005
Սիրողական այգեգործություն	-6.4	1.3	0.003	0.001
Գրասենյակային պարագաներ և գծագրության համար նյութեր	14.1	1.0	0.009	0.001
Ոսկերչական զարդեր	-9.0	-1.9	-0.012	-0.002
Անձնական գործածության այլ ապրանքներ	8.8	0.9	0.031	0.003

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.6% գնաճ, այդ թվում, գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշներ արձանագրվել են Հրազդան և Կապան քաղաքներում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.4%-ով:

2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 1.8% և 0.7% գնանկում: 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 2.3% և 33.6%-ով: 2022թ. հոկտեմբերին 2021թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գինը նվազել է 1.6%-ով, իսկ դիզելային վառելիքի գծով արձանագրվել է 28.2% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2019-2022թթ.

2015թ. նկատմամբ



**Ծառայությունների սակագներ:** Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2022թ. հոկտեմբերին 2021թ. հոկտեմբերի համեմատ սակագներն աճել են 7.3%-ով, իսկ 2022թ. սեպտեմբերի համեմատ 0.1%-ով:

Որոշ ծառայությունների ենթախմբերի սակագների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2022թ. հոկտեմբերին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը 2021թ. հոկտեմբերի նկատմամբ	2022թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հագուստի մաքրում, նորոգում և վարձույթ	6.9	0.0	0.001	0.000
Կոշիկի նորոգում և վարձույթ	9.9	0.1	0.001	0.000
Բնակարանի նորոգման և սպասարկման ծառայություններ	8.4	0.0	0.005	0.000
Կահույքի, տնային գործածության առարկաների նորոգում	5.0	0.1	0.001	0.000
Կենցաղային սարքերի նորոգում	5.1	0.2	0.003	0.000
Բժշկական ծառայություններ	3.5	0.0	0.181	0.001
Տրանսպորտի ծառայություններ	17.3	-0.3	0.401	-0.009
Փոստային ծառայություններ	7.0	0.0	0.002	0.000
Հանգստի և սպորտային միջոցառումների հետ կապված ծառայություններ	20.5	0.0	0.003	0.000
Հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	26.4	0.5	0.179	0.004
Նախադպրոցական և տարրական կրթություն	5.7	0.0	0.011	0.000
Բարձրագույն կրթություն	4.6	0.0	0.169	0.000
Սպասարկման ծառայություններ	9.9	0.8	0.099	0.008
Հյուրանոցային ծառայություններ	10.1	-0.6	0.001	0.000
Վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայություններ	5.1	0.2	0.022	0.001
Տրանսպորտի ապահովագրություն	7.3	0.0	0.011	0.000
Ֆինանսական այլ ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում	18.6	2.5	0.111	0.016



Հանրապետության դիտարկվող 2 քաղաքներում (այդ թվում մայրաքաղաքում) 2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.2%-ով, 5-ում գրանցվել է 0.2-0.1 գնանկում, իսկ 4-ում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

**Արտարժույթի շուկա:** 2022թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական գների 0.3% հավելաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.6% նվազումով (ՀՀ դրամն արժևորվել է): 2022թ. հոկտեմբերին 2021թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների 6.0% հավելաճ և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 17.0% նվազում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել է սպառողական գների 4.2% գնաճ և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 7.6% նվազում: 2022թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 402.7 դրամ, ինչը 16.0%-ով ցածր է 2021թ. հոկտեմբերի համապատասխան ցուցանիշից (479.2 դրամ):



ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների  
տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2022թ.			
	սեպտեմբեր		հոկտեմբեր	
	2022թ. օգոստոսի նկատմամբ	2021թ. սեպտեմբերի նկատմամբ	2022թ. սեպտեմբերի նկատմամբ	2021թ. հոկտեմբերի նկատմամբ
Խնձոր	-3.7	29.0	2.9	27.7
Տանձ	-9.3	46.4	-1.8	38.5
Նուռ	1.0	23.8	-20.4	21.0
Դեղձ	2.1	25.2	28.9	32.6
Խաղող	-30.3	10.3	-9.2	-9.0
Ադամաթուզ (բանան)	2.7	10.5	12.1	12.3
Նարինջ	6.7	-25.3	7.5	-20.4
Մանդարին	9.8	16.1	-29.1	26.1
Կիտրոն	-3.7	-10.9	-0.9	-11.3
Զմերուկ	66.1	129.3	-6.5	72.1
Ելակ	-1.9	7.4	0.9	-1.1
Կաղամբ	3.7	-43.9	-1.2	-26.3
Կանաչ սոխ	4.8	48.3	-32.2	-6.0
Խառը կանաչեղեն	7.4	44.5	-8.4	22.3
Լոլիկ	5.6	18.0	31.9	7.3
Վարունգ	17.5	36.6	-15.5	14.9
Սմբուկ	25.4	97.0	25.0	85.7
Պղպեղ	5.6	33.5	18.0	32.0
Կանաչ լոբի	29.9	16.6	5.2	11.0
Գազար	1.7	-21.5	-0.1	-19.8
Ճակնդեղ	2.8	-11.1	7.4	2.0
Գլուխ սոխ	-3.8	-0.3	-5.0	-1.1
Սխտոր	4.2	18.1	-1.4	12.9
Մունկ	2.8	11.2	0.2	9.6
Կարտոֆիլ	-1.6	-3.3	13.2	-0.8

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում <sup>1</sup>

	2021թ. դեկտեմբերը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ	2022թ.									
		հուն- վարը	փետր- վարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	սեպտեմ- բերը 2021թ. սեպտեմ- բերի նկատ- մամբ
		նախորդ ամսվա նկատմամբ									
Եվրասիական տնտեսա- կան միություն (ԵԱՏՄ)	108.6	101.0	101.1	106.9	101.6	100.3	100.0	99.8	99.8	100.3	114.3
Հայաստան	107.7	101.6	100.1	101.8	102.3	100.1	100.3	98.6	100.2	100.6	109.9
Ռուսաստան	108.4	101.0	101.2	107.6	101.6	100.1	99.7	99.6	99.5	100.1	113.7
Բելառուս	110.0	101.5	101.6	106.1	101.6	100.7	101.1	100.5	100.1	100.9	117.4
Ղազախստան	108.4	100.7	100.8	103.7	102.0	101.4	101.6	101.1	101.4	101.8	117.7
Ղրղզստան	111.2	101.0	100.7	103.2	102.0	100.3	101.5	100.5	100.8	100.2	115.5
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) <sup>1</sup>	105.3	100.5	100.9	102.4	100.8	101.0	100.9	100.2	100.7	101.2	110.9
Ավստրիա	103.8	100.0	101.3	102.3	100.6	100.7	101.2	100.6	99.9	102.4	110.9
Բելգիա	106.6	100.9	102.1	100.7	100.3	100.8	101.0	99.4	101.8	101.3	112.1
Բուլղարիա	106.6	101.2	101.2	102.1	102.1	101.3	101.2	100.8	100.8	100.7	115.6
Հունգարիա	107.4	101.4	101.1	101.0	101.7	101.7	102.0	102.4	103.7	101.8	120.7
Գերմանիա	105.7	100.9	100.9	102.5	100.7	101.1	99.9	100.8	100.4	102.2	110.9
Հունաստան	104.4	99.8	100.9	102.7	102.0	100.9	102.2	98.4	99.8	103.0	112.1
Դանիա	103.4	101.6	100.9	100.7	101.8	101.1	100.9	101.2	100.0	101.5	111.1
Իռլանդիա	105.7	99.6	100.9	102.1	100.9	101.1	101.3	100.4	100.2	100.0	108.6
Իսպանիա	106.6	99.2	100.8	103.9	99.7	100.7	101.9	99.4	100.3	99.8	109.0
Իտալիա	104.2	100.0	100.8	102.4	100.4	100.9	101.2	98.9	100.9	101.6	109.4
Կիպրոս	104.8	99.3	100.9	101.8	103.1	100.6	101.2	101.7	100.5	99.0	109.0
Լատվիա	107.9	100.0	101.7	103.3	102.3	103.9	102.4	102.2	100.4	101.5	122.0
Լիտվա	110.7	101.9	101.8	102.4	101.9	102.2	102.2	100.8	100.6	102.9	122.5
Լյուքսեմբուրգ	105.4	100.2	102.4	101.9	100.9	100.6	101.4	98.7	100.4	100.5	108.8
Մալթա	102.6	100.0	100.7	101.3	103.7	101.7	101.7	100.9	101.0	99.4	107.4
Նիդերլանդներ	106.4	100.5	100.8	104.4	100.4	99.2	99.9	102.2	102.4	102.8	117.1
Լեհաստան	108.0	101.5	100.0	102.9	101.8	101.6	101.4	100.4	100.8	101.5	115.7
Պորտուգալիա	102.8	100.3	100.5	102.6	102.4	101.0	101.1	100.0	99.8	101.3	109.8
Ռումինիա	106.7	101.4	101.0	101.9	102.4	101.2	100.8	100.5	100.4	100.9	113.4
Սլովակիա	105.1	102.8	100.8	101.7	101.4	101.4	101.1	100.6	100.7	100.9	113.6
Սլովենիա	105.1	100.6	101.1	99.6	102.1	102.0	102.3	100.9	99.9	99.7	110.6
Ֆինլանդիա	103.2	101.4	100.6	101.6	100.4	101.3	100.8	100.2	99.9	100.7	108.4
Ֆրանսիա	103.4	100.2	100.9	101.6	100.5	100.8	100.9	100.3	100.5	99.5	106.2
Խորվաթիա	105.2	100.4	101.0	101.9	102.7	101.2	101.6	101.4	100.1	100.3	112.6
Չեխիա	105.4	104.6	101.3	101.9	101.8	101.9	101.5	101.3	100.3	100.9	117.8
Շվեդիա	104.5	99.4	100.9	101.9	100.6	101.1	101.3	99.8	101.6	101.2	110.3
Էստոնիա	112.0	99.7	101.3	102.7	104.1	101.8	102.8	102.1	102.3	100.3	124.1
Այլ երկրներ											
Կանադա	104.8	100.9	101.0	101.4	100.6	101.4	100.7	100.1	99.7	100.1	106.9
Նորվեգիա	106.1	98.3	101.2	100.8	101.5	100.2	101.1	101.4	99.8	101.8	107.7
Միացյալ Թագավորություն	104.8	99.8	100.8	101.1	102.5	100.7	100.8	100.6	100.5	100.6	110.1
ԱՄՆ	107.0	100.8	100.9	101.3	100.6	101.1	101.4	100.0	100.0	100.2	108.2
Թուրքիա	136.1	111.1	104.8	105.5	107.3	103.0	104.9	102.4	101.4	103.1	183.4
Ուկրաինա	110.0	101.3	101.6	104.5	103.1	102.7	103.1	100.7	101.1	101.9	124.6
Մոլդովա	113.9	102.8	102.1	104.1	105.6	102.0	102.2	101.4	100.9	101.4	134.0
Վրաստան	113.9	101.1	100.9	102.5	101.8	101.1	100.2	100.2	100.1	100.8	111.5
Շվեյցարիա	101.3	100.2	100.6	100.5	100.4	100.6	100.5	100.1	100.3	99.8	103.2
Ճապոնիա	100.8	100.3	100.4	100.4	100.4	100.3	100.0	100.5	100.4	100.4	103.0

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022թ. հունվար-նոյեմբերին՝ մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2022 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2022թ. դեկտեմբեր ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 152):

<sup>1</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ: